«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	ԳՈՅԱԿԱՆԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ
ԱՌԱՐԿԱ	ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
ՀԵՂԻՆԱԿ	ՍՈՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՄԱՐԶ	ՇԻՐԱԿ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	«ՍԱՐԱՏԱԿԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ԳՅՈՒՄՐԻ 2021

Բովանդակություն

Ներածություն ---------- էջ 3
Գլուխ 1 Գոյական անուն
1.1. Ձևաբանության ուսումնասիրության առարկան----------էջ 5
1.2. Խոսքիմասային խմբավորումները ----------էջ 7
1.3. Գոյականը՝ որպես խոսքի մաս ----------էջ 8
1.4. Գոյականի տեսակներն ու քերականական կարգերը ----------էջ 9
Գլուխ 2 Գոյականի ուսուցումը գծապատկերների միջոցով
2.1. Գծապատկերների օգտագործումն ու դերը ուսուցման գործում----------էջ 16
2.2. Գոյականի ուսուցումը գծապատկերների միջոցով ----------էջ 18
2.3. Գոյականի տեսակների ուսուցումը գծապատկերների միջոցով ----------էջ19
2.4. Գոյականի քերականական կարգերի
ուսուցումը գծապատկերների միջոցով ----------էջ 21
Եզրակացություն ----------էջ 25
Օգտագործված գրականության ցանկ ----------էջ 26

Ներածություն

Ակնհայտ է, որ լեզուն մարդկային հաղորդակցության միջոց է. հնչյունների, բառերի, քերականական կանոնների մի ամբողջական համակարգ, որը դրսևորման երկու ձև ունի՝բանավորուգրավոր:Այն մարդկային հասարակության մեջ օգտագործվում է որպես մտածողության միջոց, քանի որ դպրոցում լեզվի ուսումնասիրությունը աշակերտի համար դառնում է մի այնպիսի հնարավորություն, որի շնորհիվ զարգանում է նրա երևակայությունը դրսևորելու, խոսքը ճիշտ ձևակերպելու, հույզերը, մտածմունքները գրագետ ներկայացնելու կարողություններ:

Լեզուն նաև բոլոր ոլորտներից գիտելիքներ ձեռք բերելու հիմքն է հանդիսանում: Դպրոցում ցանկացած առարկայի ուսումնասիրություն լավագույնս կիրականացվի աշակերտի կողմից, եթե նա լավ է յուրացրել իր մայրենի լեզուն: Անգամ այլ լեզուներ ուսումնասիրելու համար նախ մայրենին պետք է լավ իմանալ: Մեր մայրենին հայոց լեզուն է, որը հայ ժողովրդի հոգևոր մշակույթի ամենանվիրական արգասիքն է: Այն, լինելով հնագույն, զարգացած ու հարուստ լեզուներից մեկը, արտացոլում է մեր ժողովրդի կյանքի ողջ պատկերը, նրա դարավոր պատմությունը: Հետևաբար և՝ մեր մայրենի լեզուն ազգային արժեք ունի. ազգապահպան միջոց է: Այն հնարավորություն է տալիս խորությամբ ընկալելու հայ մարդու արժեքային համակարգը: Միևնույն ժամանակ դաստիարակում եկող սերունդներին լինել հայրենասեր ու հայրենանվեր անձնավորություն:Որպեսզի մեր սաները դառնան բարեկիրթ, հայրենիքի համար պիտանի, միևնույն ժամանակ հասարակության մեջ իրենց տեղը լավագույնս զբաղեցրած անհատներ, նախ և առաջ պետք է սիրեն իրենց լեզուն, տիրապետեն այն հիմնական կանոններին ու օրինաչափություններին, որոնք կնպաստեն գրագետ ու ճիշտ խոսք կառուցելուն: Այս առումով որոշակի կարևորություն է ներկայացնում ձևաբանության բաժնի ուսումնասիրությունը, որը մեզ կօգնի իմանալ, թե բառերն ինչ ձևափոխությունների պիտի ենթարկենք, ինչպես կապակցենք իրար, որպեսզի կազմենք գրագետ նախադասություններ:

'Ձևաբանություն' բաժնում ամենից շատ ուսումնասիրված խոսքի մասը գոյականն է, որի գործընթացը սկսվում է դեռևս տարրական օղակից: Սակայն սա նույնպես ինչ-որ տեղ ունի յուրացման և ճիշտ ընկալման որոշ դժվարություններ ու խնդիրներ: Դրանք հիմնականում կապված են գոյականի հոլովների ուսուցման հետ: Հոլովների ուսուցումը, որն աշակերտը ուսումնասիրում է 7-րդ դասարանում, ինչ-որ տեղ դժվարություն է առաջացնում այն առումով, որ այս թեման սերտորեն կապված է շարահյուսական որոշ թեմաների՝ նախադասության մեջ գոյական-բառի որևէ անդամի դերով հանդես գալու հետ: Իսկ այդ թեմաները հիմնական դպրոցում ավելի մանրամասն ուսումնասիրվում են 8-րդ դասարանում: Եվ աշակերտները լավ չեն պատկերացնում շարահյուսական և ձևաբանական այդ կապը: 8-րդ դասարանում են անցնում նաև 'Կապ'խոսքի մասը, որը նույնպես սերտ առնչություն ունի հոլովների տեսակներիտարբերակման հետ:

Այսօր աշակերտներին բավականաչափ զբաղեցնում են սոցիալական ցանցերը, որի արդյունքում նրանք սովորելու քիչ ժամանակ ունեն, ցանկություն էլ չունեն որևէ բան անելու, որ լավ հասկանան տրվող նյութը: Որպեսզի սովորելու գործընթացը հնարավոր լինի,

կրթության ձևը պետք է լինի կապակցված ու համակարգված: Այս հարցում կարևորում եմ գծապատկերների դերը: Այն հնարավորություն է տալիս աշակերտին տեսնելու և հասկանալու ողջ թեման մեկ գծապատկերի միջոցով, տարբերակելու դրանում եղած տեսակները, հատկանիշները, նպաստում նյութի մատչելի մատուցմանն ու հեշտ յուրացմանը: Չէ՞ որ պատկերները տպավորիչ են դարձնում նյութը և նպաստում հիշողության մեջ երկար մնալուն: Եվ մարդիկ ավելի լավ են յուրացնում այն ամենը, ինչ ուղեկցվում է պատկերներով: Դրանք կարող են լինել ոչ միայն նկարներ, նաև գծապատկերներ: Ուսուցչի խոսքը, երբ որ ուղեկցվում է գծապատկերներով, աշակերտներն ավելի շուտ են հասկանում այն:

Հաշվի առնելով վերոնշյալ խնդիրներն ու դժվարությունները, որոնք կապված են 'Գոյականի հոլովների' ուսուցման հետ, ես որպես հետազոտության նյութ ընտրել եմ 'Գոյականի ուսուցումը', որն ավելի արդյունավետ կդառնա գծապատկերների միջոցով իրականացվելիս: Գծապատկերների միջոցով հնարավոր է ինչ-որ ձևով կապ ստեղծել գոյականի և այլ խոսքի մասերի, նաև դրանց շարահյուսական պաշտոնների միջև՝ հաշվի առնելով, որ աշակերտները այդ թեմաների մասին ունեն միայն տարրականգիտելիքներ:

Գլուխ 1 Գոյական անուն

1.1. Ձևաբանության ուսումնասիրության առարկան

Խոսք կառուցելու ընթացքում բառերը որոշակի ձևափոխությունների ենք ենթարկում, դրանք կապակցում ենք միմյանց, կազմում նախադասություններ: Այս հարցում կարևոր հանգամանք է քերականության ուսուցումը, որն ունի երկու բաժին՝ ձևաբանություն և շարահյուսություն: Չենք կարողանա բառերն ու բառակապակցությունները իրար ճիշտ միացնել, եթե չիմանանք, թե ինչ ձևափոխությունների պետք է ենթարկել դրանք:«Բառերի ձևափոխությունների կանոնների ամբողջությունը կոչվում է ձևաբանություն»:[1] «Ձևաբանություն» տերմինն առաջացել է հունարեն «մորֆոլոգիա» բառից, որը նշանակում է ուսմունք ձևի մասին (ըստ Ալ. Մարգարյանի «Հայոց լեզվի քերականություն» գրքի): Այն ուսումնասիրում և ուսուցանում է բառերի այն բոլոր ձևափոխությունների կանոնները, որոնցով բառերը կապակցվում են միմյանց: Օրինակ, գոյականը՝ որպես ձևաբանության ուսումնասիրության առարկա ունի հոլովման համապատասխան ձևափոխության կանոններ: Այդ կանոնների համաձայն գոյական-բառը գործածվում է այս կամ այն հոլովով՝ արտահայտելով զանազան հարաբերություններ այլ բառերի հետ: Ձևաբանության ուսումնասիրության առարկան բառն է, իսկ նրա սահմանած օրենքներն ու օրինաչափությունները վերաբերում են բառին ու ձևերին: Սա նշանակում է, որ ձևաբանությունը քերականական ուսմունք է բառի մասին:[2]Բառի ուսումնասիրությամբ զբաղվում են նաև լեզվաբանության մյուս բաժինները: Եթե <u>բառագիտությունը</u> ուսումնասիրում է բառի կազմությունը, պատմական զարգացումն ու փոփոխությունները, ձևաիմաստային խմբերը, արտահայտած կոնկրետ իմաստները, ծագումնաբանությունը և այլն, <u>շարահյուսությունը՝</u> շարահյուսական միավոր լինելը, բառը՝ որպես նախադասության անդամ, բառերի կապակցման և նախադասությունների կառուցման օրինաչափությունները, իսկ <u>ոճաբանությունը՝</u> թե բառը որ ոճերում է գործածվում կամ պատկերավորման և արտահայտչական ինչ երանգավորում ունի, ապա <u>ձևաբանությունը</u>, ուսումնասիրելով բառային կազմը, պարզում է, թե բառն ինչ քերականական իմաստ է արտահայտում և ինչ ձևափոխություններ է կրել: Օրինակ՝ եթե «սպիտակ» բառը դիտարկենք որպես լեզվաբանության մյուս բաժինների ուսումնասիրության առարկա, ապա կարևորություն կտրվի այն բանին, որ այն կոնկրետ գույնի իմաստ է արտահայտում, «ճերմակ» բառի հոմանիշն է, «սև»բառի հականիշը, գործածվում է գրական լեզվի բոլոր ոճերում, բնիկ հայերեն չէ, այլպարսկական փոխառություն է, պարզ բառ է, նախադասության մեջ կարող էգործածվել, որպես գոյականականանդամի լրացում և այլն:

1. Հ. Բարսեղյան, Փ. Մեյթիխանյան, Հայոց լեզու 7-րդ դասարան, Երևան-2017, էջ 13
2. Մ. Ե. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու. Ձևաբանություն, Երևան – 2004, էջ 4

Իսկ ձևաբանության համար կարևոր է այն, որ «սպիտակ» բառը հատկանիշ է արտահայտում, մտնում է որակական ածականների խմբի մեջ, ունի համեմատության աստիճաններ (սպիտակ-ավելի սպիտակ, ամենասպիտակ), կարող է նաև հոդ ստանալ և

հոլովվել գոյականի նման (սպիտակը, սպիտակի, սպիտակով և այլն):[1]Այստեղից կարելի է ենթադրել, որ «բառի» մեջ առկա է երկու կողմ՝ մասնավոր, եզակի, որով նա տարբերվում է բառապաշարի մյուս բառերից և ընդհանուր, որով միավորվում է բառերի այս կամ այն խմբին: Օրինակ՝ **գիրք, տուն, բաժակ, տետր, պատուհան** բառերը անվանում են տարբեր առարկաներ և ունեն տարբեր իմաստներ (եզակի և մասնավոր): Այս բառերի խումբն արտահայտում է նաև ընդհանուր իմաստ, որը հատուկ է ոչ միայն այս խմբում եղած բառերից յուրաքանչյուրին (օր.՝ **գիրք** բառին), այլև բերված բառերի ամբողջ խմբին: Սրանք արտահայտում են առարկայական հասկացություն, եզակի թիվ ունեն, գործածված են անորոշ առումով և այլն: «Բառի ընդհանուր իմաստը (կամ իմաստները), որ հատուկ է ոչ միայն տվյալ բառին, այլև բառերի մի ամբողջ խմբին ևս, կոչվում է քերականական իմաստ»:Քերականական իմաստներն արտահայտվում են բառի տարբեր ձևերի միջոցով (քար**ի**, քար**եր**, քար**ը**, քար**ից**, գրեց**ինք**, գրեց**ի**, գրեց**իր**, հ**որ**, տ**ան**)՝ երբեմն հատուկ մասնիկների (**ի, եր, ը, ինք, իր** և այլն), երբեմն էլ արմատահնչյունների փոփոխությամբ (**ո, ա** և այլն): Քերականական իմաստները կարող են արտահայտվել նաև առանց հատուկ մասնիկների (բացասական կամ զրո ձևով[1]): Օրինակ՝ **քար, հայր, տուն** բառերը որևէ ձևափոխության չեն ենթարկվել, բայց բառաձևեր են և դրանց քերականական իմաստն արտահայտիչ է դառնում՝ հակադրվելով այդ բառերի ձևափոխության ենթարկված մյուս ձևերին (**քար-քարը՝ քար**-անորոշ առման իմաստ, իսկ **քարը՝** որոշյալ, **քար-քարից՝ քար –** ուղղական հոլովի, **քարից**-բացառական , **հայր**-ուղղական հոլովի, **հոր**-սեռական):Բառի քերականորեն փոփոխված ձևը կոչվում է բառաձև:[2]Ինչպես որ բառերն ունեն իրենց քերականական իմաստները, այնպես էլ քերականական ցուցիչները ևս ունեն իմաստներ, որոնց շնորհիվ են բառեր կապակցում և կազմում նախադասություններ: Բառերը կարող են բաղկացած լինել իմաստային այլևս անբաժանելի մեկ կամ մեկից ավելի իմաստակիր տարրերից(ցուցիչներից), որոնք լեզվաբանության մեջ կոչվում են ձևույթներ: Օրինակ՝ **զինվորները** բաղկացած է հետևյալ իմաստակիր մասերից կամ տարրերից՝ **զին-վոր-ներ-ը:** Սրանք ձևույթներ են: **Զին(**զեն)-ը արմատ է, նյութական իմաստ ունի, ցույց է տալիս առարկա, **վոր**-ը՝ բառակազմական ձևույթ է, ավելի կոնկրետ՝ ածանց, որի շնորհիվ նոր բառեր են կազմվում (բան**վոր**, անց**վոր** և այլն), **ներ**-ը՝ հոգնակիի իմաստ է արտահայտում (աշակերտ**ներ**, աղջիկ**ներ**, պաստառ**ներ** և այլն), իսկ **ը**-ն՝ որոշյալ առման իմաստ: Վերջին երկուսի միջոցով նոր բառեր չեն կազմվում, այլ կազմվում են

1. Մ. Ե. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու. Հնչաբանություն, Երևան – 2004
2. Մ. Ե. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու. Հնչաբանություն, Երևան – 2004
3. Լ. Եզեկյան, Ա.Սարգսյան, Ռ.Սաքապետոյան, Հայոց լեզու, դասագիրք 11-րդ դաս., Երևան-2015

միևնույն բառիտարբեր ձևեր, այսինքն՝կարելի է ասել, որ ունենքերականական իմաստներ:Ձևույթները լեզվի ձևաիմաստային նվազագույն միավորներ են, ունեն իրենց ձևն ու բովանդակությունը, որոնք անխզելիորեն կապված են միմյանց հետ: Ձևույթները բաժանվում են երկու խմբի՝
1. Հիմնական կամ նյութական ձևույթներ, որոնք արտահայտում են նյութական իմաստ՝

առարկա, երևույթ, հատկանիշ, գործողություն: Դրանք արմատներն ու արմատական բառերն են:2. Երկրորդական ձևույթներ, որոնք զուրկ են նյութական իմաստից, միանում են հիմնական ձևույթներին: Դրանք են՝ վերջավորությունները, ածանցները և այլն: Երկրորդական ձևույթներն էլ իրենց հերթին բաժանվում են երկու խմբի՝ բառակազմական և քերականական:[1]Բառակազմական ձևույթները, ավելանալով հիմնական ձևույթներին, փոխում են բառի իմաստը և նոր բառեր են կազմում (ծաղկ**անոց**, ամպրոպ**ային**, լավ**ություն**, **ամենա**մեծ, **ան**սեր և այլն): Դրանք ածանցներն են: Քերականական ձևույթները չեն փոխում բառի իմաստը, նոր բառեր չեն կազմում, այլ կազմում են միևնույն բառի տարբեր ձևեր: Դրանք վերջավորություններն են (հոլովման, խոնարհման, հոգնակիի կազմության, որոշյալ առման և այլն):Ինչպես տեսնում ենք, ձևաբանությունը ուսմունք է բառի, նրա ձևերի և այդ ձևերի արտահայտած քերականական իմստների մասին: Լեզվի բառապաշարը (կամ լեզվի բառային կազմը) ըստ բառերի քերականական իմաստների և դրանց մի մասի կրած ձևափոխությունների բաժանվում է տարբեր խմբերի: Այդ խմբերը կոչվում են **խոսքի մասեր:** Հետևաբար ձևաբանությունը ուսմունք է խոսքի մասերի և դրա օրինաչափությունների մասին:

1.2. Խոսքիմասային խմբավորումները

Քերականական իմաստի կարևորագույն դրսևորումներից մեկը խոսքիմասային իմաստն է: Այն կոնկրետ է և տարածվում է բառերի խմբերի վրա: Օրինակ՝ վերցնենք **տուն, քար, մարդ, բնություն** բառերի խումբը: Այս խմբի բոլոր բառերն էլ առարկա են ցույց տալիս, **վազել, գրել, կարդալ, զվարճանալ** բառերը՝ գործողություն, **դոնեդուռ, հետո, արագ, հերոսաբար** բառերը՝ գործողության հատկանիշ և այլն: Բառի խոսքիմասային պատկանելությունը որոշելիս պետք է առաջնորդվել դրանց բուն, հիմնական իմաստներով: Կան շատ բառեր էլ, որոնք կիրառության ընթացքում՝ նախադասության կամ բառակապակցության մեջ կարող են ձեռք բերել փոխաբերական, ածանցյալ, լրացուցիչ իմաստներ: Օրինակ՝ **քար** (ի՞նչ), բայց՝ **քար սիրտ** (ինչպիսի՞ սիրտ) ձևերում **քար** բառի հիմնական իմաստը առարկա ցույց տալն է, կիրառության մեջ այն արտահայտել է նաև առարկայի հատկանիշի իմաստով: Կամ կարող է հատկանիշ արտահայտող բառը գործածվել առարկայական իմաստով: Օրինակ՝ **մեծ, գեղեցիկ** բառերի հիմնական իմաստը հատկանիշ ցույց տալն է՝ պատասխանելով **ինչպիսի՞** հարցին: Կիրառության մեջ այն կարող է արտահայտել առարկայական իմաստ՝ **մեծ հետաքրքրություն, գեղեցիկ կոթող:**

1. Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանություն, Երևան-2004

Չնայած, որ նման ձևերը կիրառության մեջ կարող են արտահայտվել լրացուցիչ իմաստներով, բայց դա չի կարող հիմք ծառայել խոսքիմասային պատկանելությունը որոշելու համար: Հայերենն ունի տասը խոսքի մաս, և դրանցից յուրաքանչյուրը՝ իր հիմնական իմաստն արտահայտող ընդհանուր խմբին պատկանող բառեր: Խոսքի մասերն են՝ **գոյական,ածական**, **թվական**, **դերանուն**, **բայ**, **մակբայ**, **կապ**, **շաղկապ**, **վերաբերական** և **ձայնարկություն**: Այս խոսքի մասերն, ըստ իրենց արտահայտած ընդհանուր իմաստի, բաժանվում են երեք խմբի.ա. Նյութական իմաստ արտահայտող խոսքի մասեր (գոյական, ածական, թվական, դերանուն,

բայ, մակբայ): Սրանք ունեն անվանողական արժեք. անվանում են աշխարհի առարկաներն ու երևույթներն ու դրանց հատկանիշները:բ. Քերականական իմաստ արտահայտող խոսքի մասեր (կապ, շաղկապ): Այս բառերը նյութական իմաստից զուրկ են, ցույց են տալիս հարաբերություն և խոսքի մեջ իրար են կապում բառեր կամ նախադասություններ՝ դառնալով սպասարկու բառեր: գ.Վերաբերմունքային իմաստ արտահայտող խոսքի մասերը (վերաբերականներն ու ձայնարկությունները) եղանակավորում են խոսքը՝ արտահայտելով դատողական կամ կամ զգացական վերաբերմունք:

1.3. Գոյականը՝ որպես խոսքի մաս

Խոսքի մասերից ամենամեծ թիվը կազմում են գոյականները: Ըստ Էդուարդ Աղայանի բացատրական բառարանի հայերենի հարյուր երենսունվեց հազար բառերից գրեթե կեսը՝ վաթսունվեց հազարը, գոյականներ են: Գոյականները նյութական իմաստ արտահայտող խոսքիմասային խմբի մեջ են մտնում և ունեն անվանողական արժեք: Բառերի տարբեր խոսքի մասերի պատկանելությունը որոշելիս պետք նկատի ունենալ հետևյալ կարևոր հանգամանքները՝ 1. ի՞նչ քերականական ընդհանուր իմաստ են արտահայտում, 2. ի՞նչ ձևաբանական առանձնահատկություններ ունեն ու ինչպիսի՞ ձևափոխությունների են ենթարկվում և 3. շարահյուսական կիրառությունները:[1]Ըստ այս հանգամանքներից առաջինի՝գոյականի ընդհանուր, քերականական իմաստն այն է, որ ցույց է տալիս առարկա: Քերականության մեջ առարկա ասելով հասկանում ենք ոչ միայն նյութական իրեր (**պատ, դուռ, գիրք, գրիչ, ծաղիկ**), այլև՝ անձեր, կենդանիներ, բնության երևույթներ, զգացմունքներ, եղելություններ, գաղափարներ (**կատու, աշակերտ, խնդություն, որոտ, փորձանք, զինվոր, պատերազմ, բարություն, պատիվ** և այլն): Պատասխանում է **ո՞վ (մարդ, աշակերտ, քույր), ի՞նչ (սեղան, կատու, բարություն)** հարցերին: Հայերենում կան մի շարք գոյականներ, որոնք միաժամանակ կարող են հանդես գալ իբրև ածականներ (**տաք, ցուրտ, մութ, խավար, հարուստ**):Ըստ երկրորդ հանգամանքի՝ձևաբանական առանձնահատկության՝ գոյականը թեքվող խոսքի մաս է և ունի թվի, հոլովի, առման քերականական հատկանիշներ: Ձևափոխությունների ենթարկվում է երբեմն համապատասխան վերջավորություններով (հոլովական, առման, հոգնակի թվի), երբեմն էլ՝ առանց մասնիկների: Գոյականներ կարող են կազմվել նաև գոյականական ածանցների միջոցով՝ **ություն**-լավություն, քաջություն, **ք**-ընթացք, վազք:

1. Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանություն, Երևան-2004

Սրանցում նկատելի է հատկանիշի և գործողության առարկայացում: Երբեմն էլ նույն ածանցի միջոցով հնարավոր է կազմել և՛ գոյականի, և՛ ածանցի ձև: Օրինակ՝ **ական-** աշակերտ**ական, նաև՝**դպրոց**ական:** Լեզվի պատմական զարգացման ընթացքում բառը մի խոսքի մասից կարող է անցնել մյուսին: Այս երևույթը տեղի է ունենում շարահյուսական կիրառության հիման վրա: Բառը, մի խոսքի մասից անցնելով մյուսին, ձեռք է բերում տվյալ խոսքի մասին հատուկ ձևաբանական առանձնահատկություններ: Բավական տարածված է ածականի գոյականական կիրառությունը: Այն կարող է ստանալ հոդ, հոլովվել, դրվել հոգնակի թվով՝ ձեռք բերելով առարկայի գաղափար (**գեղեցիկաղջիկ,** բայց՝ գեղեցիկ**ը**, գեղեցիկ**ին**, գեղեցիկ**ից**, գեղեցիկ**ներ**): Գոյականաբար կարող են գործածվել նաև դերբայները (**գրող մարդ,** բայց՝ գրող**ը**,

գրողից, գրողներ), դերանունները (**այդքան տետր,** բայց՝ այդքանը, այդքանից, այդքանով), թվականները (**հինգ մարդ,** բայց՝ հինգը, հինգեր, հինգից):Ըստ երրորդ հանգամանքի՝ շարահյուսական դերի և կիրառության՝ գոյականները նախադասության մեջ հանդես են գալիս որպես ենթակա, ստորոգյալի մաս, գոյականական և բայական անդամի լրացում: Ըստ բառիմաստային և քերականական առանձնահատկությունների՝ գոյականները բաժանվում են հետևյալ խմբերի՝ հատուկ և հասարակ, թանձրացական ու վերացական , անձնանիշ և իրանիշտեսակների:

1.4. Գոյականի տեսակներն ու քերականական կարգերը

Գոյական անունները լինում են **հատուկ և հասարակ, թանձրացական** ու **վերացական, անձնանիշ** և **իրանիշ:**

Հատուկ և հասարակ գոյականներ: «Միևնույն տեսակի առարկաներից յուրաքանչյուրին տրված առանձին անունը կոչվում է հատուկ անուն»:[1] Օրինակ՝ **Անահիտ**, **Երևան**, **Սև ծով**, **«Հայոց պատմություն» աշխատություն**, **Սևանա լիճ**, **Տիգրան Մեծ** և այլն:«Միևնույն տեսակի բոլոր առարկաներին տրվող ընդհանուր անունը կոչվում է հասարակ անուն»:[1]Օրինակ՝ **մարդ**, **քաղաք**, **ծով**, **գիրք**, **լիճ**, **դպրոց** և այլն: Հատուկ անունները աշխարհագրական անուններ են, մարդկանց անուններն ու ազգանունները, հիմնարկների, կազմակերպությունների անվանումները, գրական, գիտական և այլ ստեղծագործությունների անունները, կենդանիներին տրվող անունները և այլն: Հատուկ և հասարակ անունները բացի իմաստային կողմից տարբերվում են նաև քերականորեն. հասարակները գործածվում են և՛ եզակի, և՛ հոգնակի թվերով, հատուկ անունները՝ հիմնականում եզակի: Հատուկ և հասարակ անունները անջրպետված չեն իրարից: Հաճախ հասարակ անունները դառնում են հատուկ (օր.՝ **Վ**արդ, **Ծ**աղիկ, **Հ**ասմիկ, **Մ**անուշակ, **Ա**վագ, **Ն**վեր, **Թ**ագուհի, **Հ**ամեստ): Նկատելի է նաև հակառակ երևույթը, երբ հատուկ անունները դառնում են հասարակ (**կ**այսր, **օ**գոստոս և այլն): Ի տարբերություն հասարակ անունների՝ հատուկ անունները գրվում են մեծատառերով: Դրանք լինում են պարզ և բաղադրյալ: Պարզ հատուկ անունները բաղկացած են միայն մեկ բաղադրիչից: Բաղադրյալ հատուկ անունները՝ մեկից ավելի բաղադրիչ –բառերից: Բաղադրյալ հատուկ անուններն ունեն գրության հիմնական երկու կանոն:

1. Հ. Բարսեղյան, Փ. Մելթիխանյան, Հայոց լեզու 7-րդ դասարան, Երևան-2017

1. Մեծատառով են գրվում բոլոր բաղադրիչները: 2. Մեծատառով է գրվում միայն առաջին բաղադրիչը:

Բոլոր բաղադրիչները գրվում են մեծատառով հետևյալ դեպքերում:
ա. Եթե բաղադրյալ հատուկ անունը որևէ երկրի, պետության կամ պետական կազմավորման անուն է: Օրինակ՝ **Հ**այաստանի **Հ**անրապետություն, **Ռ**ուսաստանի **Դ**աշնություն, **Ամ**երիկայի **Մ**իացյալ **Ն**ահանգներ, **Ն**իդեռլանդների **Թ**ագավորություն, **Լ**յուքսեմբուրգի **Մ**եծ **Դ**քսություն, **Ա**րաբական **Մ**իացյալ **Է**միրություններ և այլն: բ. Եթե բաղադրյալ հատուկ անվան բաղադրիչները առանձին-առանձին հատուկ անուններ են: Օրինակ՝ **Ա**րփա-**Ս**ևան, **Դ**ոնի **Ռ**ոստով, **Հ**ովհաննես **Թ**ումանյան, **Ե**ղիշե **Ա**բգարի **Ս**ողոմոնյան, **Ե**ղիշե **Չ**արենց, **Մ**այնի **Ֆ**րանկֆուրտ, **Հ**այկ և այլն: Նրանց կազմում եղած քերականական նշանակություն ունեցող բառ-մասնիկները գրվում են փոքրատառ: Օր.՝ **Ռ**իո **դը Ժ**անեյրո, **Լ**եոնարդո **դ**ա **Վ**ինչի, **Ժ**աննա **դը Ա**րկ և այլն:
գ. Եթե բաղադրյալ հատուկ անունը բաղկացած է լրացում-լրացյալից, և լրացյալը հատուկ անուն է, այդ դեպքում լրացումը ևս գրվում է մեծատառով:[1] Օրինակ՝ **Հ**յուսիսային **Կ**ովկաս,

Նոր Նախիջևան, Վազգեն Առաջին, Աշոտ Երկաթ, Զորի Միրո, Արևելյան Եփրատ, Փոքր Ասիա, Իվան Ահեղ, Տիգրան Երկրորդ և այլն: դ. Հոգևոր մշակութային այն բաղադրյալ հատուկ անուններում, որոնց մեջ բոլոր բաղադրիչները առանձին-առանձին կամ «Սուրբ» մականվան հետ հատուկ անուն են: Օր.՝ Անգղա Սուրբ Նշան, Ընծայից Սուրբ Աստվածածին, Մաստարայի Սուրբ Հովհաննես, Մուղնու Սուրբ Գևորգ և այլն: **Երկիր, Արև,Լուսին** բառերը գրվում են մեծատառով, եթե գործածվում են որպես աստղային համակարգության առանձին մարմինների անուններ:Մյուս դեպքերում**միայն առաջին բաղադրիչներն են գրվում մեծատառով**: ա. Եթե լրացում-լրացյալ կապակցության մեջ լրացյալը հատուկ անուն չէ: Օրինակ՝ Արարատ լեռ, Սև ծով, Սևանա լիճ, Շիրակի մարզ, Արագածոտնի մարզ, Խաղաղ օվկիանոս, Կարմիր ծով, Այոր լիճ և այլն: բ. Գրական, գիտական և այլ երկերի, գրքերի, պարբերական հրատարակությունների բաղադրյալ անվանումներում՝ «Պատվի համար», «Թմկաբերդի առումը», «Հացի խնդիր», «Ամբոխները խելագարված», «Գրական թերթ» և այլն: գ. Համաշխարհային կազմակերպությունների անվանումներում: Օր.՝ Միավորված ազգերի կազմակերպություն, Շախմատի համաշխարհային ֆեդերացիա, Ազգերի լիգա, Առևտրի համաշխարհային խորհուրդ և այլն: դ. Շքանշանների ու մեդալների, ինչպես որ պատվավոր կոչումների ու մրցանակների բաղադրյալ անուններում: Օրինակ՝ «Մովսես Խորենացի» մեդալ, «Գրիգոր Լուսավորիչ» շքանշան, «Փառքի առաջին աստիճանի» շքանշան, Պետական մրցանակ, Նոբելյան մրցանակ և այլն: ե. Բոլոր պետությունների, օրենսդիր, գործադիր և դատական բարձրագույն մարմինների բաղադրյալ անուններում՝ Ազգային ժողով, Պետական դումա, Ներկայացուցիչների պալատ, Գերագույն դատարան, Սահմանադրական դատարան և այլն: զ. Պատմական նշանավոր իրադարձությունների և ազգային, ավանդական պետական տոների բաղադրյալ անուններում: Օր.՝ Երկրորդ համաշխարհային պատերազմ, Մեծ եղեռն, Թոնդրակյան շարժում, Թարգմանչաց տոն, Սուրբ ծնունդ, Զատկի տոն և այլն:[2]

1. Լ. Եգեկյան, Ա.Սարգսյան, Ռ.Սաքապետոյան, Հայոց լեզու, դասագիրք 11-րդ դաս., Երևան-2015
2.Հ. Բարսեղյան, Փ. Մեյթիխանյան, Հայոց լեզու 7-րդ դասարան, Երևան-2017

Թանձրացական և վերացական գոյականներ: Կան գոյականներ, որոնք անվանում են անկախ կամ իբրև անկախ մտածված իրական առարկաներ և կոչվում են <u>թանձրացական գոյականներ</u>: Դրանք մարդկանց, կենդանիներին, զանազան կոնկրետ առարկաների, բնության տարբեր երևույթների անվանումներ են, ինչպես՝ **տուն**, **ջուր**, **քար**, **որոտ**, **անձրև**, **մարդաշակերտ,կայծակ** և այլն: Հակառակ սրանց՝ երկրորդ խմբի գոյականները ցույց են տալիս ոչ թե անկախ կամ ինքնուրույն գոյություն ունեցող, այլ այդպիսին մտածված իրողություններ, առարկաներ և կոչվում են <u>վերացական գոյականներ,</u> ինչպես՝ **քաջություն**, **ազահություն**, **կամք**, **զգացում**, **փառք**, **մտածողություն**, **շարժում**, **սարսափ**, **սեր**, **գութ**, **ապրում** և այլն: Վերացական գոյականները մեծ մասամբ կազմվում են հատուկ ածանցների միջոցով՝ **-ություն, -ում** և **-ք:** Թանձրացական գոյականները սովորաբար հաշվելի առարկաներ են ցույց տալիս և կարող են ստանալ քանակական թվականներով լրացումներ՝ երկու **աղջիկ,** երեք **տղա,** մեկ **անտառ,** երկու **թիթեռ** կամ՝ **աղջիկներ**, **տղաներ, թիթեռներ, անտառներ:** Իսկ վերացական գոյականները չեն կարող ստանալ այդպիսի լրացումներ՝ չի լինի **մեկ աղքատություն, հինգ տխրություն, երեք ծագում, երեք կարոտ** և այլն: Հաճախ դժվար է լինում հստակ տարբերակել թանձրացական և վերացական գոյականները: Երբեմն վերացական գոյականները ձեռք են բերում թանձրացականի իմաստ և գործածվում հոգնակի թվով: Օր.՝ **միություն, ընկերություն, շարժում, ձգտում** գոյականները

վերացական գոյականներ են, բայց աստիճանաբար ձեռք են բերել թանձրացականի իմաստ, հաճախ գործածվում են նաև հոգնակի թվով՝ **միությունների** տուն, մարզական **ընկերություններ,** ձեռքի **շարժումներ,** նրա **ձգտումները** և այլն:[1]
Անձնանիշ և իրանիշ գոյականներ: Բոլոր գոյականները, ինչպես հասարակ, այնպես էլ հատուկ, բաժանվում են երկու խմբի՝ անձ ցույց տվող և իր ցույց տվող գոյականների: Ըստ այդմ էլ լինում են **անձնանիշ** և **իրանիշ** գոյականներ: Անձնանիշ գոյականները մարդկային հատուկ և հասարակ անուններն են, որոնք պատասխանում են **ո՞վ, ովքե՞ր** հարցերին (**մարդ**, **ուսանող**, **ուսուցիչ**, **Մարինե**, **Լուսինե**, **Լևոն**, **դաստիարակ**, **հաղորդավար** և այլն), իրանիշները մյուս բոլոր գոյականներն են, որոնք պատասխանում են **ի՞նչ, ինչե՞ր** հարցերին:

Գոյականի բոլոր տեսակները ունեն իրենց հատուկ քերականական կարգերը, որոնք քերականական ձևի և իմաստի փոխհարաբերության արտահայտություններ են: Հայտնի են գոյականի թվի, հոլովի, առկայացման (որոշյալության, ստացականության, դիմորոշության, ցուցականության), անձի և իրի քերականական կարգերը: **Թվի քերականական կարգը** ցույց է տալիս առարկաների քանակը, թիվը: Գոյական անուններն ունեն երկու թիվ՝ եզակի և հոգնակի: Եզակի թիվը ցույց է տալիս եզակի, մասնավոր առարկա կամ տվյալ տեսակի առարկան ընդհանրապես, ինչպես՝ **ծառ, տղա, տուն, աղջիկ, մեծատուն, ժամացույց, արոտավայր**: Բառի ուղիղ ձևն է: Հոգնակի թիվը ցույց է տալիս նույն տեսակի մեկից ավելի առարկաներ՝ **ծառեր, տղաներ**, **տներ, աղջիկներ, մեծատուններ, ժամացույցներ, արոտավայրեր**: Այն հիմնականում կազմվումէ **եր** և **ներ** վերջավորությունների միջոցով: Միավանկ բառերին ավելանում է **եր** վերջավորությունը, իսկբազմավանկներին՝ **ներ**-ը:Բայց կան գոյականներ, որոնց հոգնակիի կազմությունը շեղվում է հիշյալ կանոններից: **Ա.**Մի շարք գրաբարյան բառեր հոգնակիի կազմության ժամանակվերականգնում են **ն** մասնիկը՝ստանալով

1. *Լ. Եզեկյան, Հայոց լեզու, Երևան - 2007*

ներվերջավորությունը՝ **բեռ, գառ, լեռ, եզ, դուռ, մատ, նուռ, ծունկ, թոռ, կուռ, ծոռ, ձուկ, հարս, մուկ**և այլն, ինչպես՝ բեռ**ներ**, գառ**ներ**, լեռ**ներ**, եզ**ներ**, դռ**ներ**, մատ**ներ**, նռ**ներ**, ծնկ**ներ**, ձկ**ներ**, հարս**ներ**, մկ**ներ**: Բացառություն է նաև **ռուս** բառի հոգնակին՝ ռուս**ներ**: **Բ. Մարդ** և **կին** բառերի հոգնակին լինում է՝ մարդ**իկ**, կան**այք**: **Գ.** Եթե բարդ բառի վերջին միավանկ բաղադրիչը գոյական է, ապա ավելանում է **եր**: Օրինակ՝ շարասյուն**եր**,վերնատն**եր**, արոտավայր**եր**, ոտնաձայն**եր**, նստացույց**եր** և այլն, իսկ եթե բառի վերջին միավանկ բաղադրիչը բայ է կամ ունի բայական իմաստ, ապա **ներ**: Օրինակ՝ վիպագիր**ներ**, ժամացույց**ներ**, մեծատուն**ներ**, նրբանցք**ներ** և այլն: Դ. Եթե մեկուկես վանկանի բառի կես վանկը գտնվում է բառասկզբում, ապա ավելանում է **ներ**: Օրինակ՝ բը-ժիշկ-**ներ**, բը-րիչ-**ներ**, գը-ղակ-**ներ**, մը-ղատ- **ներ**, խը-ղատ-**ներ**, սը-լաք-**ներ**, ըս-պա-**ներ**, ըս-պի-**ներ**, ը-տաբ-**ներ**: Իսկ եթե մեկուկես վանկանոց բառի կես վանկը գտնվում է բառավերջում, ապա ավելանում է **եր**: Օրինակ՝ կայ-սը-**եր**, ան-գը-**եր**, ար-կը-**եր**, սա-նը-**եր**, վա-գը-**եր**: Ե. **Պետ**, **նիշ** բաղադրիչներով ավարտվող բառերի հոգնակին նախընտրելի է կազմել **ներ** վերջավորությամբ:
Տիկին, **պարոն** և **անձ բառերը** հոգնակի են կազմում երկու ձևերով՝ **տիկին-տիկիններ, տիկնայք, պարոն- պարոններ, պարոնայք, անձ-անձեր, անձինք:**Գոյություն ունեն նաև գոյականներիանեզականն անհոգնական խմբեր: Անեզական գոյակաները (լատ.՝ pluralia tantum) մի շարք առարկայանիշ բառեր, որոնք պակասավոր են եզակի թվով արտահայտվելու հնարավորությունից[1]: Սրանք համապատասխան եզակի ձևեր չունեն (կամ գրեթե չունեն),

իսկ եթե ունեն էլ, ապա իմաստով հոգնակին համարժեք չէ եզակիին։Անեզականությունը պայմանավորող գործոններից են՝ 1. **-անք**, **-ենք**, **-ոնք**, **-ունք** ձևույթներով կազմված գոյականները, օրինակ՝ **Անդրեասենք**, **պչրանք**, **պճնանք**, **Սուքիասենք**, **ծաղրանք**, **պապոնք**. 2. ազգերի, ցեղերի, ժողովուրդների անունները՝ **կասպեր**, **հոներ**, **խուռիներ**, **խեթեր**, **աղվաններ**, **սլավոններ**. 3. բժշկական, դիցաբանական, լեզվաբանական, կրոնական և այլ կարգի անուններ՝ **ալկալիներ**, **խեցեմորթեր**, **պավլիկյաններ**,**Հորաներ**. 4. բույսերի ու կենդանիների դասեր, ընտանիքներ, կարգեր անվանող գոյականներ՝ **անողնաշարավորներ**, **վարդազգիներ**, **կատվազգիներ**.հատուկ և հասարակ այլ գոյականներ՝**ամպեր,նոթեր** և այլն. 5. գրաբարյան **ք** հոգնակակերտ մասնիկ ունեցող բառեր՝ **աչք**, **խելք**, **հոնք**, **կառք**, **մեղադրանք**, **Ռշտունիք, ոտք** և այլն (արդի հայերենում դրանք ըմբռնվում են որպես եզակի). 6. աշխարհագրական անուններ, որոնք համապատասխանում են օտար լեզուների անեզական աշխարհագրական անուններին՝ **Ալպեր**, **Ապալաչներ**, **Անդեր**, **Պամպասներ**, **Նիդեռլանդներ**, **Կարպատներ**:<u>**Անհոգնական գոյականներ**</u>,մի շարք առարկայանիշ բառեր, որոնք պակասավոր են հոգնակի թվով արտահայտվելու հնարավորությունից։[2]Անհոգնական գոյականները կարելի է բաժանել երկու խմբի՝ 1. բացարձակ անհոգնական բառեր, որոնք առհասարակ հոգնակի թիվ չունեն (**գինեգործություն**, **ֆեոդալիզմ**), 2. մասնակի անհոգնական բառեր, որոնցում անհոգնականությունը դրսևորվում է մասնակիորեն, այսինքն՝ որոշ կիրառություններում հոգնակի թիվ չունեն, իսկ այլ կիրառություններում կարող են ունենալ։

1 <u>Հ. Զ. Պետրոսյան</u>, <u>Ս. Ա. Գալստյան</u>, Թ. Ա. Ղարագյուլյան, Լեզվաբանական բառարան (խմբ. <u>Էդ. Բ. Աղայան</u>), Երևան, «Հայկական ՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի հրատարակչություն», <u>1975</u>
2.Գ. Խաչատրյան, Հայոց լեզվի ոլորաններում, Վանաձոր, 1994

Արդի հայերենում անհոգնակի գոյականներից են՝ 1. Մարդկանց և կենդանիներին տրվող անունները (**Վահան, Թադևոս, Բողար**), 2. Հիմնարկ-ձեռնարկություններին, հրատարակչություններին և գրականության ու արվեստի ստեղծագործություններին տրվող պայմանական անունները (**Երևանի պետական համալսարան, «Կռունկ», «Անասնաֆերմա»**), որոնք տրվում են այդ առարկաներին՝ մյուսներից տարբերելու համար, ուստի և հոգնակի եզր չեն ենթադրում։ 3. **-ություն**, **-երեն** և **-եղեն** ածանցներով վերջացող գոյականները, որոնք արտահայտում են հավաքական իմաստ կամ լեզու, օրինակ՝ **աշակերտություն, աշխատավորություն, մրգեղեն, կանաչեղեն, բանջարեղեն, ոսկեղեն, չինարեն, հայերեն, գերմաներեն**։ 4. Ածականներից և գոյականներից **-ություն** ածանցով կազմված բազմաթիվ գոյականներ (ազգակցական անուններ, երևույթներ), օր՝ **ծուլություն**, **աշխատասիրություն, սպիտակություն, հետևողականություն, հեզություն** և այլն։ Այս դեպքում կան մի շարք բառեր, որոնք իմաստային յուրահատկության պատճառով կարող են ցույց տալ տվյալ հատկանիշի մեկից ավելի մասնավոր արտահայտություն, օր.՝**ընդունակություն (ներ), մոլորություն(ներ), կամայականություն(ներ), հարստություն(ներ)**։ 5.Արհեստ, մասնագիտություն, արտադրության ճյուղ նշանակող բառերը, ինչպես՝ **ատաղձագործություն, դարբնություն, երկրագործություն**։ 6. Հասարակարգ նշանակող բառեր՝**ֆեոդալիզմ, ստրկատիրություն**։ 7. Գիտության բնագավառ, ճյուղ նշանակող բառեր՝ **հասարակագիտություն, լեզվաբանություն, ֆիզիկա, քիմիա**։8. Գիտական, կրոնական ուսմունք, հասարակական-քաղաքական հոսանք, ստեղծագործական ուղղություն, դավանանք և նման երևույթներ անվանող գոյականներ, որոնք հիմնականում ձևավորված են որևէ վերջածանցով՝**ռեալիզմ, ռոմանտիզմ, քրիստոնեություն, լուսավորչականություն, իմպրեսիոնիզմ**։9. Բազմաթիվ բայանուններ, որոնք մեծ մասամբ ձևավորված են **-ք** կամ **-յուն** ածանցով՝ **քայլք, նայվածք, հևք, շրշյուն, շառաչյուն,**

արհամարհանք, ծաղրանք: 10. Այն անունները, որոնք միայն մի առարկա է անվանում՝ **երկրագունդ, Լուսին, Մարս, Մոսկվա, Երևան, Վանաձոր**: 11. Այն անունները, որոնք մեկից ավելի առարկաներ են անվանում, կարող են գործածվել հոգնակի թվով՝ **Արամներ, Գրիգորյաններ, Մասիսներ**: 12. Որոշ ժամանականիշ գոյականներ՝ **գարնանամուտ, ապրիլ, երկուշաբթի, միջօրե, մթնշաղ,կեսօր**: 13. **-ական//-ելի//-ալի//-ող//-ոտ//-կոտ//-ուն//-ացի//-որդ//-իչ + ություն** ածանցներով կազմված վերացական գոյականները՝ **հուզականություն, վարվեցողություն, վախկոտություն, սիրունություն, գյուղացիություն, ճամփորդություն, նկարչություն**: 14. Նյութի մի շարք անուններ՝ **օդ, կաթ, արճիճ, գինի**: Սրանց՝ հոգնակի կազմելու կամ չկազմելու հարցում դեր կատարում է նրանց իրական վիճակը, այսինքն՝ տվյալ նյութը իր վիճակով ենթակա՞ է հաշվվելու, ընկալելու քանակական կազմով, թե՞ ոչ: Որպես նյութի անուն չունեն հոգնակի, որպես տեսակ ունեն: Այսպես՝ **գինին** ալկոհոլային խմիչք է: **Գինիները** մեզ դուր եկան:**Գոյականի առկայացման (տարորոշման) կարգը**ձևավորվումէ **ս, դ, ն, ը** հոդերի միջոցով, որոնք, դրվելով գոյականների կամ գոյականաբար գործածված բառերի վրա, նրանց բառային իմաստը քերականորեն տարորոշում են տարբեր մասնավորումներով կամ պարզապես որոշյալության միջոցով: Համեմատենք՝ Նա **երգ** է լսում // Նա լսեց իր սիրած **երգը**: **Գրիչ** տուր // **Գրիչդ** տուր: **Ժամացույց** եմ գնել // **Ժամացույցս** չկա: Այս հոդերը հիմնականում դրվելով գոյականների վրա՝ ձևավորում են գոյականի քերականական կարգ: Այդ կարգի ընդհանուր առումը որոշյալությունն է, քանի որ **ս, դ** հոդերը իրենց արտահայտած ստացականությամբ, ցուցականությամբ կամ դիմորոշմամբ որոշյալություն են հաղորդում բառին, իսկ **ը** հոդի որոշյալությունն ինքնին հասկանալի է: Սակայն որոշյալությունը պատմականորեն կիրառվում է **ը** հոդի արժեքը բնորոշելու համար, իսկ ընդհանուր կարգը կոչվում է առկայացման կարգ: **Ս, դ, ն, ը** հոդերը կոչվում են տարորոշիչկամ առկայացնողհոդեր՝իրենց ենթատեսակներով՝ **որոշիչ, ստացական, դիմորոշ, ցուցական**: **Որոշյալության (որոշչի) կարգը** ձևավորվում է **ը, ն** հոդերով և արտահայտում է առարկայի ծանոթ լինելը խոսողին: Առարկայի անունը խոսքի մեջ մեկ անգամ գործածելուց հետո կարելի է լինում գործածել որոշյալ առումով: **Ն, ը** հոդերը քերականական դերով նույնարժեք են և ունեն դիրքային տարբերություններ:**Ստացականությունն** արտահայտում են **ս, դ** հոդերը, ինչպես՝ գիրք**ս**< իմ գիրքը, գիրք**դ**< քո գիրքը: **Ս, դ** հոդերը կարող են ստանալ այն բոլոր գոյականները, որոնց ցույց տված առարկան կարող է պատկանել որևէ մեկին՝ թերթ**ս**, հայտարարությունդ, հայելի**դ**: Արդի հայերենում ստացական հոդ ունեցող բառը գործածվում է առանց ստացական դերանվան՝ **գիրքս**, բայց ոչ՝ իմ գիրքս: Հոդի և դերանվան համատեղ գործածությունը համարվում է բարբառայնություն: **Դիմորոշությունը** նույնպես արտահայտվում է **ս, դ** հոդերով, ընդ որում **ս** հոդը ցույց է տալիս առաջին դեմք, **դ** հոդը՝ երկրորդ. օրինակ՝ Երեք**ս** աշխատում էինք տարբեր գրքերի վրա: Մյուս հոդերի համեմատությամբ դիմորոշ հոդը թույլ է արտահայտում իր իմաստը, ուստի երբեմն անհրաժեշտ է լինում հոդով ցույց տված դեմքը արտահայտել նաև **անձնական** դերանունով: Օրինակ՝ **Ես**՝ ուսուցիչ**ս**, **մենք**՝ ուսանողներ**ս**: **Ցուցականությունը** հայերենում արտահայտվում է **ս** հոդով: Նշված իմաստով հոդն ունի սահմանափակ կիրառություն, գործածվում է սակավաթիվ բառերի հետ, ունի **այս** դերանվան իմաստ և արտահայտվում է առարկայի և ժամանակի մոտիկության գաղափար: Արդի հայերենի համար խորթ է ցուցական հոդը և **ցուցական դերանունը** նույն բառի հետ գործածելը:
Հոլովի քերականական կարգը:Հոլովը գոյականի (և գոյականական գործածություն ունեցող բառի) քերականական այն փոփոխությունն է, որով արտահայտվում է առարկայի

վերաբերական տարբեր հարաբերություններ: Ժամանակակից լեզվաբանությունը հոլովի իմաստը որոշում է նրա ոչ թե բոլոր կիրառությունների, այլ գլխավոր կիրառության հիման վրա: Եվ քանի որ հոլովը առարկա ցույց տվող բառերի հարաբերություն է արտահայտում, նրա իմաստային կիրառությունների մեջ գլխավորը պետք է համարել ոչ թե պարագայական կամ հատկանշային կիրառությունները, այլ նրանք, որոնցում նա առարկա է ցույց տալիս (գործող կամ եղող, գործողության հետ կապված): Հոլովական իմաստը չի կարելի նույնացնել հոլովի արտահայտած կոնկրետ հարաբերության, շարահյուսական գործառույթի հետ, քանի որ նույն հոլովի գործածությունը շարահյուսական տարբեր գործառույթներով պայմանավորված է տվյալ հոլովի հետ հարաբերության մեջ մտնող բառերով և տվյալ հոլովով գործածված բառի իմաստով:Արդի հայագիտության մեջ ընդունված է այն տեսակետը, որ արևելահայերենի գոյականն ունի 7 հոլով՝ **ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական և ներգոյական**: Որոշ մասնագետներ գտնում են, որ գոյականն ունի միայն հինգ հոլով /հայցական հոլովը միացնում են ուղղական հոլովին, տրական հոլովը՝ սեռականին/: Հայ լեզվաբաններ Ստ. Մալխասյանի, Ա. Ղարիբյանի և Գ. Սնակի առաջ քաշած գիտական հիմնավորման համաձայն՝ ժամանակակից հայերենի հոլովման համակարգը որոշելիս անհրաժեշտ է հաշվի առնել և՛ նրանց կազմությունն ու ձևը, և՛ արտահայտած բովանդակությունն ու նշանակությունը: Նկատի ունենալով այս փաստը՝ վերոնշյալ հեղինակները հիմնավորում են յոթ հոլովի համակարգը: **Ուղղական հոլովը** գոյականի ուղիղ ձևն է. հոլովական վերջավորություն չի ստանում՝ **գիրք**, **այգի**, **օր**, **շարժում**, **Արամենք**, **տուն**, **հայր**: **Սեռական հոլովը** կազմվում է **-ի**, **-ու**, **-վա**, **-ան**, **-ոջ**, **-ց**, **-ա-**, **-ո-** թեքույթներով՝ գրք**ի**, այգ**ու**, օր**վա**, լեռ**ան**, ընկեր**ոջ**, Արամեն**ց**, տ**ա**ն, հ**ո**ր: **Տրական հոլովը**նույնպես կազմվում է **-ի**, **-ու**, **-վա**, **-ան**, **-ոջ**, **-ց**, **-ա-**, **-ո-** թեքույթներով, այսինքն՝ ձևով նման է սեռականին, սակայն տրական հոլովով բառերը կարող են որոշիչ հոդ ստանալ՝ գրք**ի**(ն), այգ**ու**(ն), օր**վա**(ն), լեռ**ան**(ը), ընկեր**ոջ**(ը), Արամեն**ց**, տ**ա**ն(ը), հ**ո**ր(ը): **Հայցական հոլով:** Իր ցույց տվող գոյականների հայցականը ձևով հիմնականում նման է ուղղականին, անձ ցույց տվողներինը՝ տրականին, օրինակ՝ **գիրքը**, **աշակերտին**: Հայցականով բառերը ուղղականից և տրականից տարբերվում են շարահյուսական կիրառությամբ: **Բացառական հոլովը** կազմվում է **-ից** կամ **-ուց** մասնիկներով՝ գրք**ից**, այգ**ուց**: **-Ուց** վերջավորությունը ստանում են սեռականում **-ու** մասնիկը ստացող գոյականները: **Գործիական հոլովը** կազմվում է **-ով**կամ **-բ** վերջավորություններով՝ գրքով, ուրախությամբ, շարժմամբ: **Բ** մասնիկով կարող է կազմվել **-ում** և **- ություն** վերջածանցներով գոյականների գործիականը: Բառավերջի **–ն** հնչյունը **–բ**-ից առաջ փոխվում է **մ**-ի՝ մեծություն-մեծությամբ: **Ներգոյական հոլովը**կազմվում է **-ում** վերջավորությամբ՝ քաղաք**ում**, գրք**ում**: Մի շարք բառեր ներգոյական չունեն:[1]

1.Ս.Սարգսյան, Ս.Համբարձումյան, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Երևան – 2012

Գլուխ 2 Գոյականի ուսուցումը գծապատկերների միջոցով

2.1.Գծապատկերների օգտագործումն ու դերը ուսուցման գործում

«Գծապատկեր» հասկացությունը լայն է: Բացատրվում է այսպես՝ 1. դիագրամ, 2. որևէ երևույթ, մեծություն գծային պատկերով ներկայացնելու միջոց, գրաֆիկ, սխեմա: Այլ կերպ ասած՝ գծապատկերը տվյալները տեսողական ձևով ներկայացնելու միջոց է: Լավ գործիք է այն ուսուցիչների համար, ովքեր ցանկանում են սխեմատիկ կերպով առաջարկել որևէ դաս, մատուցվող նյութ:

Երբ արտաքին աշխարհից տեղեկատվություն ենք ստանում, այն սկզբում առնչվում է մեր կարճաժամկետ կամ աշխատանքային հիշողությանը: Որպեսզի կարողանանք արտաքին աշխարհից տեղեկություն ստանալ, մեզ պետք է <u>ուշադրության կենտրոնացում</u>: Ուշադրությունը կարևոր է ոչ միայն ուսուցման համար, այլև այսօր համարվում է մարդու կյանքի կարևորագույն ռեսուրսը: Այլ կերպ ասած՝ մարդու վրա ազդելու համար առաջնայինը նրա ուշադությունը գրավելն է: Այսպիսով՝ սովորելը հնարավոր դարձնելու առաջին քայլը ուշադության կենտրոնացումն է:[1] Այս քայլի իրականացման լավագույն միջոցներից է պատկերների, մասնավորապես գծապատկերների օգտագործումը, քանի որ պատկերով ուղեկցվող նյութը ավելի հեշտ է յուրացնելը: Նոր գիտելիքներ ձեռք բերելու աշակերտի հնարավորությունը մեծապես կախված է այն բանից, թե գիտելիքների նախնական ինչ պաշարներ ունի նա: Ընդհանրապես մեր գիտելիքների պաշարը պահեստավորվում է երկարատև հիշողության մեջ: Այն աշակերտները, ովքեր ունեն գիտելիքների հարուստ պաշար, ավելի շատ բան կարող են վերցնել նոր ուսուցանվող նյութից: Այստեղից եզրահանգում ենք. որքան շատ գիտելիքներ ունենք, այնքան հեշտ ու շատ բան կարող ենք սովորել: Եթե կարճաժամկետ հիշողության առանձնահատկությունը սահմանափակ լինելն է, ապա երկարաժամկետ հիշողության առանձնահատկությունը այն է, որ այնտեղ մնում է խորքային առումով լավ հասկացած գիտելիքը: Այսինքն՝ այն ամենը, ինչ մենք մակերեսային ենք հասկացել, մնայուն չէ: Այս առումով, որպեսզի աշակերտները ունենան մնայուն գիտելիքներ, պետք է ուսուցանվող նյութը կրկնելու, ամրապնդելու, կիրառելու, կապակցելու հնարավորություններ ընձեռվեն: Այս հարցում ևս մեզ շատ կօգնեն համապատասխան

գծապատկերները: Դրանք ոչ միայն տպավորիչ են դարձնում նյութը, այլև կարող են գործիք հանդիսանալ իմացածը կրկնելու, ամրապնդելու, կիրառելու, կապակցելու համար: Գծապատկերների օգտագործումը կարելի է իրականացնել դասապրոցեսի բոլոր փուլերում՝ դասի սկզբում, նոր նյութի մատուցման ժամանակ, ամփոփելիս: Այն նաև սովորածը պարզելու լավագույն հնարներից մեկն է: Ամենից հաճախ կարելի է դրանք օգտագործել նոր նյութը բացատրելիս:

1.Ուսուցման արդյունավետ հնարներ, Ս. Խաչատրյան, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան -2020

Նկար 1



Ահա մի քանի գծապատկերների օրինակներ (**նկար 1**), որոնք էությամբ գիտելիքների կազմակերպիչներ են: Կան գծապատկերների տեսակներ, որոնց շնորհիվ հնարավոր կլինի նյութը բաժանել մասերի: Դրանք են՝ «Ծառ գծապատկերը», «Մտքի քարտեզը», «Հասկացությունների քարտեզը» և այլն: Գծապատկերների մի ուրիշ խումբ մեզ համեմատություններ կատարելու հնարավորություններ է տալիս՝ «Վենի դիագրամը», «Երկճյուղ գծապատկերը», «Քառաբաժանը» և այլն: Կան նաև հաջորդականություն հաղորդող, պատճառ հետևանք ներկայացնող գծապատկերների խմբեր: Հաջորդականություն հաղորդող գծապատկերներ՝ «Հոսող գծապատկեր», «Շրջանաձև

գծապատկեր», «Մանրամասնող գծապատկեր» և այլն: Պատճառ – հետևանք ներկայացնող՝ «Ներդրում-արդյունք գծապատկեր», «Զկնանման», «Հարաբերությունների» գծապատկեր:[1]

2.2.**Գոյականի ուսուցումը գծապատկերների միջոցով**

«Գոյական» խոսքի մասի հանգամանորեն ուսումնասիրությունը հիմնական դպրոցում իրականացվում է 7-րդ դասարանում: Մինչև քերականական տեսանկյունից այն դիտարկելը, նախ կարելի է վերլուծել «գոյական» եզրույթը բառակազմորեն, բացատրել իմաստը: Այն կազմված է **գոյ** արմատից և **-ական** ածանցից: Ածանցավոր բառ է, նշանակում է՝ **կա, է, գոյություն ունի:** Այսինքն՝ գոյականները այնպիսի բառեր են, որոնք ցույց են տալիս գոյություն ունեցող առարկա. իր, անձ, կենդանի, բնության երևույթներ, զգացումներ, հուզումներ, գաղափարներ. այն ամենը, ինչ կարող ենք տեսնել, զգալ: Ապա կարելի է ներկայացնել այս խոսքի մասի քերականական առանձնահատկությունները, որը նպատակահարմար է ցույց տալ նաև գծապատկերի միջոցով (**նկար 3**): Ներկայացնելով գոյականը՝ որպես խոսքի մաս՝ կարևոր է ցույց տալ նաև նրա տեղը խոսքիմասային խմբավորումների մեջ (**նկար 2**). այն, որ գոյականը նյութական իմաստ արտահայտող խոսքի մաս է, անվանում է առարկա և առարկայական հասկացություն և նախադասության մեջ հանդես է գալիս որպես ենթակա, ստորոգելի (ստորոգյալ կազմող բառ) և լրացում:

Նկար 2

1.Ուսուցման արդյունավետ հնարներ, Ս. Խաչատրյան, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան -2020

Նկար 3



Աշակերտները նախորդ դասարաններում ինչ – որ չափով ուսումնասիրել են շարահյուսական որոշ թեմաներ, ունեն, օրինակ, տարրական գիտելիքներ նախադասության անդամների մասին, կարողանում են նախադասության մեջ տեսնել ենթական, ստորոգյալը և լրացումը: Պատկերացնում են, որ եթե լրացումները լրացնում են գոյականին, ապա գոյականական անդամի լրացում են, իսկ եթե բային՝ բայական անդամի: Կարելի է կատարել շարահյուսական վերլուծություն՝ ընդգծել ենթակաները՝ մեկ, ստորոգյալները՝ երկու ուղիղ գծով, իսկ լրացումները ալիքաձև համապատասխանաբար մեկ կամ երկու գծերով: Այս դեպքում նախընտրելի է վերլուծել պարզ նախադասություններ, ցույց տալ այն գծապատկերի միջոցով: Այն հնարավորություն է տալիս աշակերտին տեսնել գոյականը նախադասության մեջ՝ նաև շարահյուսական տեսանկյունից:

Առաջադրանք: 1.Կազմել գծապատկերը:

1. Արամը գիրք է կարդում:

Ենթակա **Ստորոգյալ**

Արամը կարդում է

Բայական անդամի լրացում

գիրք

2. Արթիկը քաղաք է:

Ենթական **Ստորոգյալ**

Արթիկը քաղաք է

3. Ես սիրում եմ մայրաքաղաք Երևանը

ենթակաՍտորոգյալ

Ես սիրում եմ

Բայական անդամի լրացում

Երևանը

Գոյականական անդամի լրացում

մայրաքաղաք

2.Առանձնացնել գոյականները

Գոյականներ՝ Արամը, գիրք, Արթիկը, քաղաք, մայրաքաղաք:

2.3. Գոյականի տեսակների ուսուցումը գծապատկերների միջոցով

Մինչև անցնելը գոյականի տեսակների ուսուցմանն ու դրանց տարբերակմանը, ես նախընտրում եմ օգտագործել «Գոյական» թեմայով գծապատկեր– պաստառը (**նկար 4**), որի միջոցով աշակերտները կտեսնեն ողջ թեման մեկ պատկերի մեջ: Իմ խոսքը ուղեկցելով այդ պաստառի ցուցադրումով՝ մատուցվելիք նյութը դարձնում եմ ավելի հասանելի լսարանի համար: Ցույց տալով յուրաքանչյուր տեսակի անվանում, նաև օրինակները՝ բացատրում եմ դրանց հիմնական առանձնահատկությունները և օրինաչափությունները: Յուրաքանչյուր դասի ժամանակ (երբ ուսուցանվում են գոյականը, տեսակները, քերականական կարգերը՝ թիվը, առումը, հոլովը) գծապատկերի միջոցով նաև անդրադարձ եմ կատարում նախորդ թեմային, ավելի լավ է յուրացվում նոր նյութը և մոտավոր գաղափար են կազմում նաև գոյականի մյուս բաժինների մասին, որոնք պետք ուսումնասիրվեն հաջորդող դասերին:

Նկար 4



Հատուկ և հասարակ, անձ և իր ցույց տվող գոյականի տեսակների ուսուցման ժամանակ նպատակահարմար եմ գտնում օգտագործել «Վենի դիագրամ»գծապատկերը՝ մի կողմում գրելով, օրինակ, հատուկ գոյականները, մյուս կողմում՝ հասարակ: Իսկ որպես ընդհանուր հատկանիշ այդ երկու տեսակներին պատկանող գոյականների համար նշում ենք դրանց անձ կամ իր ցույց տալը:
Գրառվող գոյականները հիմնականում ընտրվում են տրված նախադասություններից: Գոյականի տեսակների ամփոփման ժամանակ կարելի է օգտագործել «Քառաբաժան» գծապատկերը՝ յուրաքանչյուր սյունակում գրելով նշված տեսակին պատկանող գոյականներ: «Քառաբաժան» գծապատկերը կարելի է գծել գրատախտակին, աշակերտների

մասնակցությամբ լրացնել աղյուսակը՝ առանձնացնելով յուրաքանչյուր տեսակին պատկանող բառերը: (**նկար 5**)

Նկար 5

Հատուկ Անահիտ, Երևան, Հայաստանի Հանրապետություն, Հովհաննես Թումանյան , Հայկ Նահապետ, Սուրբ Ծնունդ, Ծիր Կաթին, Մարտի ութ	**Հասարակ** մարդ, քաղաք, գյուղ, լիճ, տղա, աղջիկ, երկինք, հոկտեմբեր, աշխարհ, ընտանիք, հզորություն, սեր, զգացմունք, նպատակ, շուն, այծ
Անձ **Անահիտ, Հայկ Նահապետ, Հովհաննես Թումանյան, մարդ, տղա, աղջիկ**	**Իր** **Երևան, Հայաստանի Հանրապետություն, Սուրբ Ծնունդ, Ծիր Կաթին, քաղաք, գյուղ, լիճ, երկինք, հոկտեմբեր, Մարտի ութ, աշխարհ, ընտանիք, հզորություն, սեր, զգացմունք, նպատակ, շաուն, այծ**

2.4. Գոյականի քերականական կարգերի ուսուցումը գծապատկերների միջոցով

Գոյականներնունենքերականականերեքհատկանիշ, այսինքն՝քերականականերեքկարգ՝թվի, առմաննհոլովի:Առմաննթվիքերականականհատկանիշներիուսուցումըգրեթեդժվարությունչի հարուցումաշակերտներիմոտ:
Գոյականիհատկապեսթվիմասինբավականգիտելիքներնրանքարդենստացելենախորդդաս արաններում: Սրանք (առումն ու թիվը) հեշտ յուրացվող թեմաներ են. երբեմն նույնիսկ առանց կանոնի իմացության աշակերտները կարողանում են մեխանիկորեն կազմել տրված բառերի հոգնակիի, բառերի որոշյալ և անորոշ առման ձևերը կամ տեքստում հեշտությամբ գտնել ու տարբերակել որոշյալ և անորոշ առումով տրված բառերը: Որոշակի դժվարություն կարող է առաջանալ հոգնակիի կազմության կանոններից մեկի ուսուցման ժամանակ: «Այն բարդ բառերը, որոնց վերջին բաղադրիչը միավանկ բառ է, կարող է ստանալ **եր** կամ **ներ** վերջավորությունը»: Դասագրքում («Հայոց լեզու», 7 –րդ դաս.) բերված այս կանոնը ճիշտ հասկանալու և կիրառելու համար պետք է նախ կարողանալ բառերը վերլուծել բառակազմորեն, որի արդյունքում նրանք կհասկանան՝ վերջին միավանկ բառը բայական իմաստ ունի, թե գոյականական: Այս առումով կարևոր է հետադարձ կապ ստեղծել «Բառակազմություն» թեմայի հետ՝ ցույց տալով կապը դրա և հոգնակիի կազմության տվյալ ձևաբանական հատկանիշի հետ: Ինչ վերաբերում է <u>**հոլովների ուսուցմանը**</u>, դժվար չէ նկատել այն բոլոր խնդիրներն ու դժվարությունները, որոնք կարող են առաջանալ մատուցման ընթացքում: Գիտենք, որ հոլովի կարգն արտահայտում է գոյականի կապակցական փոփոխությունների համակարգը: Խոսքում գործածվելիս տարբեր բառերի կապակցվելու համար գոյականները որոշակի ձևերով փոփոխվում են. օրինակ՝ **պատրաստել մետաղ** բառերն իրար չեն կապակցվում, բայց պատրաստել մետաղից բառերը կապակցվում են,

որովհետև **մետաղ** բառը ձևով փոխվել է՝ **մետաղից**: Գոյականիկապակցական այսպիսի փոփոխությունների համակարգը կոչվում է **հոլովում**, իսկ փոփոխման ամեն մի ձևը՝ **հոլով**: Այս համակարգում անշուշտ ընդգրկվում է նաև գոյականի ուղիղ՝ չփոխված ձևը, այսինքն՝ հոլովման համակարգը ձևավորվում է գոյականի ուղիղ և թեքված ձևերի ամբողջությամբ:Հոլովների տեսակների տարբերակման և նախադասության մեջ դրանց ճիշտ ճանաչելու համար նախ պետք է իմանալ որոշ առանձնահատկություններ: Դրանք այդ հոլովներից յուրաքանչյուրին բնութագրող և միայն դրան հատուկ կանոններ են: Առանձին – առանձին ուսուցանելուց առաջ կարելի է համակարգված գիտելիք փոխանցել աշակերտներին աղյուսակ – գծապատկերի միջոցով (**նկար 5.**)՝ տրամադրելովհոլովների կազմության հետ կապված նախնական գիտելիքներ: Այն կօգնի ինչ-որ չափով տարբերակել այս կամ այն հոլովին պատկանող բառերը:

Նկար 5

ՀՈԼՈՎԸ	ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ
ՈՒՂՂԱԿԱՆ	Գոյականի ուղիղ ձևն է. հոլովական վերջավորություն չի ստանում՝**գիրք**, **այգի**, **օր**, **շարժում, Արամենք, տուն, հայր**:
ՍԵՌԱԿԱՆ	Կազմվում է *-ի, -ու, -վա, -ան, -ոջ, -ց, -ա-, -ո-* թեքույթներով՝ **գրքի, այգու, օրվա, լեռան, ընկերոջ, Արամենց, տան, հոր:**
ՏՐԱԿԱՆ	Կազմվում է *-ի, -ու, -վա, -ան, -ոջ, -ց, -ա-, -ո-* թեքույթներով, այսինքն՝ ձևով նման է սեռականին, սակայն տրական հոլովով բառերը կարող են որոշիչ հոդ ստանալ՝ ***գրքի***(ն), ***այգու***(ն), ***օրվա***(ն), ***լեռան***(ը), ***ընկերոջ***(ը), ***Արամ***(ենց), ***տան***(ը), ***հոր***(ը):
ՀԱՅՑԱԿԱՆ	Ոչ անձ ցույց տվող գոյականների հայցականը ձևով հիմնականում նման է ուղղականին, անձ ցույց տվողներինը՝ տրականին, օրինակ՝ գիրքը, աշակերտին: Հայցականով բառերը ուղղականից և տրականից տարբերվում են շարահյուսական կիրառությամբ:
ԲԱՑԱՌԱԿԱՆ	Կազմվում է *-ից* կամ *-ուց* մասնիկներով՝ **գրքից**, **այգուց**: *-Ուց* վերջավորությունը ստանում են սեռականում *-ու* մասնիկը ստացող գոյականները:
ԳՈՐԾԻԱԿԱՆ	Կազմվում է *-ով* կամ *-Բ* վերջավորություններով՝ գրքով, ուրախությամբ, շարժմամբ: *-Բ* մասնիկով կարող է կազմվել *-ում* և - *ություն* վերջածանցներով գոյականների գործիականը: Բառավերջի *–ն*հնչյունը *–Բ*-ից առաջ փոխվում է *ւմ*-ի՝ մեծություն-մեծությամբ:

ՆԵՐԳՈՅԱԿԱՆ	Կազմվում է *-ում* վերջավորությամբ՝ **քաղաքում, գրքում**: Մի շարք բառեր ներգոյական չունեն:

Հոլովի մասին նախնական ու ընդհանուր գիտելիքներից հետո կարելի անցնել նրա տեսակներից յուրաքանչյուրին՝ ցույց տալով ոչ միայն հիմնական, նաև քիչ հանդիպող ու ճանաչելու մեջ դժվարություն հարուցող հատկանիշներին: Ուղղական հոլովի ուսուցումը գրեթե դժվարություն չի առաջացնում: Այն հեշտ է ճանաչել ու գտնել նախադասությունների մեջ, որովհետև 7-րդ դասարանում սովորող աշակերտը հեշտությամբ կգտնի նախադասության մեջ ենթական, ստորոգյալ կազմող բառը, կոչականը: Սակայն լավ չի պատկերացնում որոշչի դեր կատարելը: Կարելի է այս, նաև մյուս հոլովների ուսուցման ժամանակ առաջադրանք ավելացնել՝ կապված գծապատկերի հետ: Բացի այն, որ կարելի է վերցնել պարզ նախադասություններ, վերլուծել շարահյուսորեն՝ իհարկե ցույց տալով նրա գծապատկերը, կարելի է հանձնարարել կազմել տվյալ հոլովի գծապատակերը՝ դրա մեջ ներառելով ոչ միայն ձևաբանական, նաև շարահյուսական հատկանիշները: Օրինակ՝



Խոսելով նաև հոլովների և մյուս տեսակների մասին՝ հաճախ եմ դիմում գծապատկերներ կառուցելու առաջադրանքների հանձնարարմանը: Սեռական հոլովի ուսուցման ժամանակ համեմատաբար բարդեցնում ու բազմաբովանդակ եմ դառնում գծապատկերներով առաջադրանքների հանձնարարումը, քանի որ այս հոլովի ժամանանակ հատուկ ուշադրություն է դարձվում գոյականի հոլովման, **ի ու, վա, ան, ոջ, ց** արտաքին, **ո, ա** ներքին

հոլովիչներով կազմվող գոյականների տեսակների, դրանց կազմության և ձևաբանական հատկանիշների վրա: Դա արվում է նաև մի շարք քերականական վթարներից խուսափելու համար: Հոլովների տարբերակման ժամանակ աշակերտները հատկապես դժվարանում են՝ կապված հայցական հոլովի հետ, քանի որ նա չունի իր հիմնական կազմության ձևը: Նման է տրականին և ուղղականին: Այս առումով կարևոր եմ համարում անձնանիշ և իրանիշ գոյականների հետ զուգահեռներ անցկացնելով՝ ևս կազմել գծապատկերներ: Հնարավորություն տալ աշակերտներին գծապատկերների կազմության մեջ լինեն ազատ՝ ստեղծելով նոր տեսակի պատկերներ, դիմելով իրենց իսկ երևակայության սահմաններին: Իսկ ողջ թեման՝ «Գոյական»-ն ամփոփելիս ճիշտ եմ համարում «Հասկացությունների քարտեզ» գծապատկերի օգտագործումը՝ ամփոփելով նյութի մեջ առկա բոլոր հասկացություններն ու հատկանիշները:

Եզրակացություն

Հաշվի առնելով մայրենի լեզվի դերը մեր կյանքում՝ և՛ որպես մտածողության ու հաղորդակցման, և՛ որպես ազգային արժեքորում՝ ես ուսումնասիրել եմ քերականական մի կարևոր ու ամենից շատ գործածվող թեմա՝ «Գոյականի ուսուցումը գծապատկերների միջոցով»: Ցանկացած մասնագիտություն և ցանկացած գիտական ոլորտ մուտք գործելուց առաջ մարդը պիտի նախ լավ տիրապետի իր մայրենի լեզվին և դրա հետ առնչվող կարևոր առանձնահատկություններին: Այդ թեմայի ուսուցման ժամանակ ինձ համար պարզ էր դարձել այն փաստը, որ սա նույնպես յուրացման դժվարություններ է հարուցում: Դրա համար հարկ համարեցի հանգամանորեն ուսումնասիրել գոյականը և գտնել արդյունավետ հնարներ ու միջոցներ այն ավելի մատչելի ու հասանելի դարձնելու համար: Գտնում եմ, որ մատչելիության լավագույն միջոցը տեսանելի գործիքների օգտագործումն է, տվյալ դեպքում՝ գծապատկերների: Դրանք նյութը կդարձնեն յուրացման համար պարզ, մատուցումը՝ տպավորիչ և, կարծում եմ, որ կնպաստեն նաև հիշողության մեջ երկարատև մնալուն: Այլ կերպ ասած՝ դրանց շնորհիվ կարելի է ապահովել մնայուն գիտելիքների փոխանցում և առկայություն:

Օգտագործված գրականության ցանկ

1. Լ. Եզեկյան, Ա.Սարգսյան, Ռ.Սաքապետոյան, Հայոց լեզու, դասագիրք 11-րդ դաս., Երևան-2015
2.Հ. Բարսեղյան, Փ. Մեյթիխանյան, Հայոց լեզու 7-րդ դասարան, Երևան-2017

3.Մ. Ե. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու. Ձևաբանություն, Երևան – 2004
4.Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանություն, Երևան-2004
5. Ուսուցման արդյունավետ հնարներ, Ս. Խաչատրյան, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան – 2020
6. Ս.Սարգսյան, Ս.Համբարձումյան, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Երևան – 2012
7. Լ. Եզեկյան, Հայոց լեզու, Երևան - 2007